

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 26(3)

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի ընդարձակ նիստի

ք. Երևան

13 դեկտեմբերի 2008 թվականի

Նախագահում էր՝

Տ. Սարգսյան՝ - Հայաստանի Հանրապետության վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ

Մասնակցում էին՝

- Վ. Դանիելյան - ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ
- Վ. Առաքելյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
- Ա. Գրիգորյան - «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման հարցերով քարտուղարության պետ, խորհրդի քարտուղար
- Յ. Շուքուրյան - ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս
- Գ. Չուգասյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահ
- Ա. Ալեքսանյան - «Արմինկո» ՍՊԸ համատեղ ձեռնարկության տնօրեն
- Ա. Տոնոյան - «Վեբ» ՍՊԸ-ի նախագահ
- Մ. Մարկոսյան - «Երևանի կապի միջոցների ԳՀԻ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
- Կ. Վարդանյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն
- Գ. Կարապետյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի նախագահ
- Գ. Էվոյան - «Հայլինք» ՍՊԸ-ի տնօրեն
- Վ. Մասերեջյան - «Վիրաժ Լոջիք» ամերիկյան ընկերության մասնաճյուղի գործադիր տնօրեն
- Ա. Վարդանյան - «Վիասֆեր Տեխնոպարկ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
- Ա. Մխիթարյան - «Տեղեկատվական տեխնոլոգիաների ուսուցում» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
- Բ. Ենգիբարյան - «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն

Է. Մանուկյան	- «ԻՍՄԱ» ՍՊԸ-ի տնօրեն
Ա. Բաղդրյան	- «Յունիքումփ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն
Վ. Ալեքսանդրյան	- Կառավարման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների համալսարանի ռեկտոր
Հ. Խանջյան	- «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ
Ռ. Աղգաշյան	- Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի պրոռեկտոր
Ռ. Աթոյան	- «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Գ. Հովհանիսյան	- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գործադիր տնօրեն
Հ. Մուսայելյան	- «Մինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն
Հ. Ավոյան	- «Սորսիո» ՓԲԸ-ի տնօրեն
Հ. Չոբանյան	- «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Ա. Սալաթյան	- «Նեյշնլ ինսթրումենթս» ընկերության հայաստանյան մասնաճյուղի տնօրեն
Ս. Մեհրաբյան	- «Մակադամիան ԱՌ» ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Բարսեղյան	- «Մայքրոսոֆթ» ընկերության հայաստանյան ներկայացուցչության տնօրեն
Վ. Մարտիրոսյան	- «Կոռնետ- ԱՍ» ՓԲԸ-ի խորհրդի նախագահ
Վ. Խաչիկյան	- «Արմենիան Դեյթաքոմ Քամփնի» ՓԲԸ-ի գլխավոր տեխնիկական տնօրեն
Ա. Խաչատրյան	- «Ֆայբրնետ քոմյունիքեյշն» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Խ. Կարայան	- Երևանի քաղաքապետարանի «Երևան քաղաքի կառավարման տեխնոլոգիաների կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Գ. Պարոնյան	- «Եռաչափ մոդելավորողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ
Ա. Կոնտակչյան	- «ԳԻՍ» տեղեկատվական համակարգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն
Հրավիրվածներ`	
Դ. Մարգարյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Ն. Երիցյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Հ. Հակոբյան	- ՀՀ սփյուռքի նախարար

Մ. Հարությունյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ
Պ. Դեմիրճյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Ս. Ղոնադյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Գ. Առաքելյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության գլխավոր մասնագետ
Հ. Սահակյան	- ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Ա. Քուչուկյան	- «Երևանի մաթեմատիկական մեքենաների ԳՀԻ» ՓԲԸ-ի գլխավոր ինժիներ
Բ. Ալեքսանդր	- «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի շահագործման տնօրեն
Դ. Սանդուխյան	- «ԱրմենՏել» ՀՁ ՓԲԸ-ի գլխավոր իրավաբան
Ա. Մանուկյան	- «Մեսիս» ՍՊԸ-ի տնօրեն
Ժ. Ազիզյան	- ՀՀ Էկոնոմիկայի նախարարության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման վարչության պետ
Ա. Ղազարյան	- CAPS ծրագրի տնօրենի տեղակալ
Ա. Աբրահամյան	- CAPS ծրագրի SS կլաստերի համակարգող
Ա. Սարգսյան	- «Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղարության առաջատար մասնագետ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. «Հայաստանի Հանրապետության նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աջակցող խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ 896 հրամանագրի մեջ կատարված փոփոխությունների մասին

SSՁԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

SSՁԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան

ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյան

3. Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տիրող ներկա իրավիճակի քննարկում

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի գործունեության կարգի և աշխատանքային խմբերի ղեկավարների հաստատման մասին

ՏՏԶԱ Խորհրդի գործադիր քարտուղար Ա. Գրիգորյան
Ռազմավարական քաղաքականության ԱԽ-ի ղեկավար Ա. Քուչուկյան
Ներդրումների և բիզնես հնարավորությունների ԱԽ-ի ղեկավար Բ. Ենգիբարյան
Գիտակրթական ԱԽ-ի ղեկավար Գ. Չուքասյան
Իրավակարգավորման ԱԽ-ի ղեկավար Դ. Սանդուխյան
Հեռահաղորդակցության և ինտերնետային ենթակառուցվածքների ԱԽ-ի ղեկավար Վ. Մարտիրոսյան
Մշակույթի և լեզվի ԱԽ-ի ղեկավար Հ. Խանջյան
Էլեկտրոնային կառավարման ԱԽ-ի ղեկավար Հ. Չոբանյան

5. “Windows Vista” ծրագրի հայերենացման մասին տեղեկատվության ներկայացում

Մշակույթի և լեզվի ԱԽ-ի ղեկավար Հ. Խանջյան

6. Այլ հարցեր

1. «Հայաստանի Հանրապետության նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աջակցող խորհուրդ ստեղծելու մասին» ՆՀ 896 հրամանագրի մեջ կատարված փոփոխությունների մասին

(Տ. Մարգարյան, Ա. Գրիգորյան)

1. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Մարգարյանը ներկայացրեց խորհրդի նոր անդամներին և շնորհավորեց նրանց Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի կազմում ընդգրկվելու կապակցությամբ:
2. Ընդունվեց ի գիտություն «Հայաստանի Հանրապետության նախագահի 2001

թվականի հուլիսի 20-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման աջակցող խորհրդի ստեղծելու մասին» ՆՀ 896 հրամանագրի մեջ կատարված փոփոխությունների մասին տեղեկատվությունը:

2. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախորդ նիստի հանձնարարականների կատարման ընթացքի մասին

 (Տ. Սարգսյան, Ա. Գրիգորյան, Ն. Երիցյան, Գ. Չուգասյան, Ժ. Ազիզյան, Բ. Ենգիբարյան,
 Կ. Վարդանյան)

3. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց ՀՀ-ում արբանյակային կապի ամրակցված կայանների ներկրման, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման գործընթացի պարզեցմանն ուղղված առաջարկության իրականացման խոչընդոտների մասին տեղեկատվություն:
4. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին կազմակերպել համատեղ քննարկում Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ` խնդիրների համաձայնեցնելու նպատակով: Համաձայնեցված առաջարկ չլինելու դեպքում` հանդես գալ օրենսդրական առաջարկով Ռադիոհաճախականության թույլտվության տրամադրման ողջ գործընթացի վերաբերյալ:
5. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց ՀՀ-ում ազատ օպտիկական մալուխների նպատակային տրամադրման կարգի մասին տեղեկատվություն:
6. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծրագրային փաթեթին հնարավոր աջակցություն ցուցաբերելու մասին տեղեկատվություն, մասնավորապես, առաջարկվեց մրցույթ կազմակերպել` ծառայություններ տրամադրելու նպատակով:
7. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ձեռնարկել միջոցառումներ մրցույթի կազմակերպմանն ուղղված տեխնիկական առաջադրանքի մշակման ուղղությամբ, վերջինիս առկայության դեպքում` դիմել ՀՀ

կառավարությանը կազմակերպելու մրցույթ հայերեն-անգլերեն երկկողմանի թարգմանչական ծառայությունների մատուցման համար:

8. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանը ներկայացրեց 2008 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին «Տեղեկատվական տեխնոլոգիաների ամիս» խորագրով միջոցառումների մասին տեղեկատվություն, մասնավորապես, տեղեկացրեց, որ բոլոր միջոցառումները կազմակերպվել են, բացի Էլեկտրոնային բովանդակության մրցույթից, որ պատճառ է հանդիսացել այն, որ միջոցառումը կազմակերպող «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպությունը ոչ պատշաճ կերպով է ներկայացրել փաստաթղթերը:
9. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց բավարարել «Տեղեկատվական տեխնոլոգիաների հիմնադրամ» հասարակական կազմակերպության նախագահի նամակը և ապահովել միջոցառման պետական ֆինանսավորումը:
10. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բ. Ենգիբարյանը ներկայացրեց երկու հարց ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ՝ «Հիմնական միջոցների նվիրատվություն ոչ առևտրային կազմակերպություններին» և «Կրթական ծրագրերի իրականացումն համարել որպես ոչ հարկային ծախսեր» հարցերի քննարկման արդյունքների մասին տեղեկատվություն:
11. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ՀՀ Հարկային օրենսդրության վերաբերյալ երկու հարցերը փոխանցել Գործարարության աջակցման խորհրդի նիստի քննարկմանը՝ վերջնական որոշում կայացնելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում տիրող ներկա իրավիճակի քննարկում

(Տ. Սարգսյան, Կ. Վարդանյան, Ն. Չոբանյան, Ա. Բալդրյան, Դ. Սարգսյան, Ա. Մանուկյան, Վ. Խաչիկյան, Ա. Սալաթյան, Ա. Վարդանյան, Դ. Սանդուխյան, Գ. Բարսեղյան, Գ. Չուգասզյան, Հ. Ավոյան, Ն. Երիցյան, Մ. Մարկոսյան, Բ. Ենգիբարյան)

12. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց, հաշվի առնելով այսօր տիրող համաշխարհային տնտեսական ճքնաժամի պատճառով առաջացած դժվարությունները, կազմակերպել քննարկում պարզելու համար ՀՀ-ում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի ընկերությունների գործունեությունում առաջացած խնդիրները, որպիսզի իրականացվեն միջոցառումներ հնարավորինս կանխելու համաշխարհային տնտեսական ճքնաժամի բացասական ազդեցությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ընկերությունների գործունեության վրա:
13. Տեղի ունեցան քննարկումներ, որոնց արդյունքում արտահայտվեցին մտքեր և արվեցին առաջարկներ:
14. «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանի կողմից առաջարկվեց տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող ընկերությունների և ՀՀ կառավարության հետ համատեղ ստեղծել գործակալություն` ՀՀ-ում արտադրվող տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրանքներ արտահանող ու վաճառող և արտերեկրում ծառայություններ մատուցող ընկերություններին աջակցելու նպատակով:
15. Հանձնարարվեց Ներդրումների և բիզնես հնարավորությունների խթանման աշխատանքային խմբի ղեկավար Բ. Ենգիբարյանին աշխատանքային խմբում քննարկել «Տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպության տնօրեն Կ. Վարդանյանի առաջարկը և ՏՏՁԱ Խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել ՏՏ ընկերությունների կողմից համատեղ կառույց ստեղծելու վերաբերյալ ամփոփ առաջարկ, որտեղ հստակ նշված լինի ստեղծվող կառույցի իրավական ձևը, մասնակից ընկերությունների ցանկը, իրենց կողմից ներդրվող ֆինանսական միջոցների չափը:
16. Առաջարկվեց պետության կարիքների համար ՏՀՏ գնումների, ինչպես նաև հանրապետությունում Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված մրցույթներում նախապատվությունը տալ տեղական ընկերություններին, մասնավորապես` Գնումների գործակալությանը առաջարկվի, որպեսզի պետական գնումներ իրականացնելիս տեղական ընկերություններին տրվի նախապատվություն, ժամանակավոր դժվարություններ ունեցող ընկերություններին պետությունը տրամադրի համապատասխան օգնություն, և ստեղծվեն պայմաններ ՀՀ-ում հատուկ տնտեսական գոտիներ ստեղծելու նպատակով:

17. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց տեղական ընկերությունների գործունեությանը խթանելու նպատակով`
- ա. Գնումների գործակալությանը, որպեսզի պետության կարիքների համար ՏՀՏ գնումներ իրականացնելիս տեղական ընկերություններին տրվի նախապատվություն,
 - բ. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ աջակցություն ցուցաբերելու համար այն ձեռնարկություններին, որոնք կղիմեն ՀՀ Էկոնոմիկայի նախարարությանը` իրենց ժամանակավոր դժվարություններ հաղթահարելու նպատակով,
18. Առաջարկվեց իրականացնել ՏՏ բիզնես գործընթացների բարելավմանն ուղղված միջոցառումներ, մասնավորապես` երկակի նշանակության ապրանքների թույլտվության, ապրանքների ծագման սերտիֆիկատի տրամադրման գործընթացների արագացված կարգերի հաստատում և նորաստեղծ ընկերությունների գործընթացի հեշտացմանն ուղղված քայլեր:
19. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հանձնարարեց երկակի նշանակության ապրանքների թույլտվության, ապրանքների ծագման սերտիֆիկատի տրամադրման գործընթացների արագացման և նորաստեղծ ընկերությունների գործընթացների հեշտացմանն ուղղված քայլեր իրականացնելու համար`
- ա. Իրավակարգավորման աշխատանքային խմբի ղեկավար Դ. Սանդուխյանին քննարկել Վ. Խաչիկյանի կողմից ներկայացված Կանադայի փորձը` երկակի նշանակության ապրանքների թույլտվության տրամադրման վերաբերյալ և ՏՏՁԱ Խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել հստակ առաջարկ երկակի նշանակության ապրանքների թույլտվության կարգի փոփոխման վերաբերյալ:
 - բ. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին` կազմակերպել քննարկումներ ՀՀ առևտրի պալատի հետ` ապրանքների ծագման սերտիֆիկատի տրման գործընթացը հեշտացնելու նպատակով,
 - գ. ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին` նորաստեղծ ընկերությունների գործընթացը հեշտացնելու համար խորհրդի քննարկմանը ներկայացնել Հայեցակարգ կամ Կառավարության որոշման նախագիծ այն մասին, թե ինչպես կառավարությունը կարող է աջակցել Տեղեկատվական

տեխնոլոգիաների ոլորտի նորաստեղծ ընկերություններին:

20. Առաջարկվեց ՀՀ-ում կազմակերպել միջազգային նախագահական մրցանակ SS մեծագույն հայտնագործությունների և լավագույն աշխատանքների համար, կազմակերպել SS մենեջերների մրցույթ ու լավագույն երեք մենեջերներին աջակցություն ցուցաբերել վերապատրաստվելու աշխարհի լավագույն համալսարաններում և SS ոլորտում նոր մասնագիտացված ամբիոնների բացում բուհերում:
21. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հայտնեց, որ կխորհրդակցի Հայաստանի Հանրապետության նախագահի հետ` ՀՀ-ում միջազգային նախագահական մրցանակ SS մեծագույն հայտնագործությունների և լավագույն աշխատանքների համար կազմակերպելու առաջարկի մասին և արդյունքների մասին կտեղեկացնի խորհրդին:
22. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Գիտության և կրթության նախարար Ս. Սեյրանյանին «SS մենեջերների մրցույթ կազմակերպել և լավագույն երեք մենեջերներին աջակցություն ցուցաբերել աշխարհի լավագույն համալսարաններում վերապատրաստվելու համար», «Սինոփսիս Արմենիա» ընկերության գլխավոր տնօրեն Հ. Մուսայելյանի առաջարկի վերաբերյալ ներկայացնել գործողությունների ծրագիր:
23. Հանձնարարվեց ՏՏՁԱ Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասյանին քննարկել աշխատանքային խմբում ՀՀ բուհերում նոր SS ոլորտում մասնագիտացված ամբիոնների բացման հարցը, առաջարկների առկայության դեպքում` ներկայացնել խորհրդի քննարկմանը:
24. Առաջարկվեց ՀՀ-ում հեղինակային իրավունքի պաշտպանության խնդիրների կարգավորման նպատակով իրականացնել համալիր միջոցառումներ:
25. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը հանձնարարեց ՀՀ Էկոնոմիկայի նախարար Ն. Երիցյանին ՏՏՁԱ Խորհրդի հաջորդ նիստի քննարկմանը ներկայացնել «Հեղինակային իրավունքի պաշտպանության» օրենքում համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացման և օրենքի կիրառմանը խոչընդոտող հանգամանքների վերացմանն ուղղված միջոցառումների ծրագիր:
26. Առաջարկվեց ստեղծել «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգ»:
27. Հանձնարարվեց ՏՏՁԱ Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի

ղեկավար Գ. Չուգասզյանին քննարկել աշխատանքային խմբում «Էլեկտրոնային բովանդակության հայեցակարգը» և մարտ ամսին ներկայացնել ՏՏՁԱ Խորհրդի քննարկմանը:

28. Առաջարկվեց կազմակերպել Ինտերնետի կառավարման համաժողով:
29. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Ս. Սարգսյանը տեղեկացրեց, որ Ինտերնետի կառավարման համաժողովի կազմակերպմանը գործընթացին կառավարությունը պատրաստ է մասնակցություն ունենալ և համապատասխան աջակցություն ցուցաբերել կազմակերպիչներին:
30. Հանձնարարվեց ՏՏՁԱ Խորհրդի Ռազմավարական քաղաքականության աշխատանքային խմբի ղեկավար Ա. Քուչուկյանին քննարկել համապատասխան աշխատանքային խմբում Գ. Չուգասզյանի Ինտերնետի կառավարման համաժողով կազմակերպելու առաջարկը: Քննարկման արդյունքում ներկայացնել ՏՏՁԱ Խորհրդին ծրագիր, միջոցառումների ցանկ և կառավարության մասնակցության ձևի ու ֆինանսական աջակցության չափի վերաբերյալ առաջարկությունների փաթեթ:
31. Առաջարկվեց ստեղծել «Էթնիկ ցանց»՝ ամբողջ աշխարհի հայությանը հաղորդակցման ազգային և դյուրին ցանցով ապահովելու նպատակով:
32. Հանձնարարվեց ՏՏՁԱ Խորհրդի Գիտության և կրթության աշխատանքային խմբի ղեկավար Գ. Չուգասզյանին քննարկել աշխատանքային խմբում և խորհրդին ներկայացնել «Էթնիկ ցանցի» ստեղծման համար անհրաժեշտ ծրագիր և առաջնահերթ միջոցառումների ցանկ՝ մոտավոր բյուջեով:
33. Հանձնարարվեց ՏՏՁԱ Խորհրդի Ռազմավարական քաղաքականության աշխատանքային խմբի ղեկավար Ա. Քուչուկյանին համապատասխան աշխատանքային խմբերի հետ համատեղ քննարկել և ՏՏՁԱ Խորհրդի հաջորդ նիստին ներկայացնել պետական կառավարման մարմիններում Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված 2010-2011 թվականներին նախատեսված միջոցառումների ցանկում առկա ծրագրերի իրականացումը, հնարավորության դեպքում առաջարկել տեղափոխել 2009թ, այդ կապակցությամբ ՏՏՁԱ Խորհրդին ներկայացնել Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների ցանկ՝ մոտավոր բյուջեով, որը նպատակահարմար է իրականացնել 2009թ-ի ընթացքում:

4. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի գործունեության կարգի և աշխատանքային խմբերի ղեկավարների հաստատման մասին

(Տ. Սարգսյան, Ա. Գրիգորյան)

34. Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի քարտուղար Ա. Գրիգորյանը ներկայացրեց աշխատանքային խմբերի գործունեության կարգի և աշխատանքային խմբերի ղեկավարների ընտրության մասին տեղեկատվություն:

35. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը առաջարկեց հաստատել Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի աշխատանքային խմբերի գործունեության կարգը, լիազորությունների շրջանակը և աշխատանքային խմբերի ղեկավարներին:

36. Առաջարկն ընդունվեց միաձայն:

5. “Windows Vista” ծրագրի հայերենացման մասին տեղեկատվության ներկայացում

(Տ. Սարգսյան, Հ. Խանջյան)

37. «Բի Լայն» ՍՊԸ-ի նախագահ Հ. Խանջյան ներկայացրեց “Windows Vista” ծրագրի հայերենացման մասին տեղեկատվություն:

38. ՀՀ Վարչապետ, Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի նախագահ Տ. Սարգսյանը հայտեց իր շնորհակալությունը արված աշխատանքի համար:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԱԿՑՈՂ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Տ.

ՍԱՐԳՍՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ս Տ Ո Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ա.

ԳՐԻԳՈՐՅԱՆ